ծառայի ձեռքից գինի ընդունող իշխան՝ Տեղում.
աշուղներ.

Հաճախակի են բլիթներ, գաթաներ, տեղ-տեղ մարդ՝ շղթայված առյուծ բռնած՝ Որոտնա վանքում, Լեռնաշենում (Շենաթաղում)—վերջինս հավանական է որպես Իրանից Զանգեզուր մտած առյուծ որսացած մեկը։

Հետաքրքրական են մի բարդ քանդակազարդության վրա ներկայացրած հին կենցաղի մանրամասնությունները Խանածախ գյուղում թաղված Մելիք Հայկազի գերեզմանաքարի վրա[102]։ Այստեղ մի երեսին քանդակված է հանգուցյալը ձի հեծած, մի ձեռքին բազե, մյուսին՝ նիզակ. կողքին երեք մարդ, որոնցից երկուսը՝ մուրճեր, մեկը՝ նիզակ և տապար ձեռքներին։

Տապանաքարի մյուս երեսին պատկերված է հուղարկավորություն երեք շարք քանդակներով ներկայացված։ Վերին շարքում առջևից գնում են հոգևորականներ, երկրորդ շարքում՝ չորս մարդ տանում են դիակը նաժի վրա դրած, իսկ ստորին շարքում ինը կին հետևում են, փետելով իրենց մազերը։

Այսպիսի պատկերավորումները հարուստ նյութ են տալիս նախորդ դարերի կենցաղի, մասնավորապես գործիքների ձևերի, տնտեսական պարագաների, զգեստի մասին գաղափար կազմելու համար՝ նրանք նպատակ են ունեցել ներկայացնել հանգուցյալին նրան բնորոշ պարապմունքի և նիստուկացի մեջ։ Այդպիսի նկարների ծագումը Գ. Ֆ. Զուրսինը ճիշտ է բացատրում որպես մնացորդ այն դարերից, երբ հանգուցյալի հետ թաղում էին նրա սիրած և գործածած առարկաները, այն հավատով, որ մյուս կյանքում նա շարունակելու է իր պարապմունքը և պետք կունենա այդ իրերի։ Սկզբնական շրջանում գերեզմանաքարի նախշերը պիտի որ փոխարինելիս լինեին այն նյութական իրերը, որոնք առաջ դրվում էին հանգուցյալի հետ գերեզմանի մեջ։

Գերեզմաններին վերագրվում էր մոգական ուժ։ Վախեցածներին տանում էին գերեզմանատուն և ինքնասպան կամ սպանվածի և հաղորդություն չառած թաղվածի գերեզմանի վրա գլուխը լվանալով՝ վախն էլ հետն էին լվանում։ Դժվար ոտք ելնող, վրտնավորվող երեխայի ոտները լվանում էին Ծիծեռնավանքի Ագռավի գերեզմանի վրա։ Զբեր կինը թռչում էր նոր փորած դեռ դատարկ գերեզմանի վրայով՝ չբերությունը ննջեցյալի հետ թաղվելու էր։ Հիվանդ ձին շրջեցնում էին երեք անգամ նոր փորած գերեզմանի չորս բոլորը։ Այսպիսի դեպքերում աչքի առաջ ունեին հիվանդությունը գերեզմանին հանձնելը։ Բայց այլ դեպքերում, երբ գերեզմանը պատկանում էր մի նահատակի կամ սրբի անուն վաստակած մեկին, նրա գերեզմանին փրկարար և բուժիչ զորություն էր վերագրվում։ Նրա գերեզմանաքարի վրա շինած թասանման փոսիկից հիվանդին ջուր էին խմեցնում, գերեզմանի տակից և հողաթմբի վրայից վերցնում էին հողը և ուտեցնում հիվանդ հասակավորին կամ երեխային, նույնիսկ հիվանդ անասունին։ Այդ հողը կոչվում էր խնօրուն, օրինակ՝ Բեխի մոտ Սուրբ Արիստակես անապատում։ Տաթևի մոտ գտնված Պետրոս եզնավորի գերեզմանի խաչքարին վերագրվում էր անձրև բերելու կամ դադարեցնելու զորություն։

Ննջեցյալները կապված էին համարվում ոչ թե միայն իրենց ընտանիքների, այլև ամբողջ համայնքի հետ։ Նրանց հոգու հանգստության և լույսի մեջ ապրեցնելու համար տեղի էին ունենում ընդհանուր հոգեհանգիստներ։ Ամենից խորհրդանշական էր ննջեցյալի հարգումը Մեծ պասի առաջին օրը։ Այդ

---

102 Чурсин Г. Ф., նշված աշխ., էջ 245—247։